

ԴԵՐԵՆԻԿ ՅՐԱՆՏԻ ԴՈՄԱՆՅԱՆ

Ծնվել է 1953թ. նոյեմբերի 18-ին Երևանում:

1970-1971թթ. աշխատել է ԵՊԲԻ ցոիչ, 1971-1972թթ.՝ Երևանի տրիկոտաժի ֆաբրիկայում բանվոր:

1978թ. ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը:

1978-1979թթ. անցել է ինտերնատուրա՝ Մալաթիա - Սեբաստիայի կլինիկական և Յոկոտեմբերյանի շրջանային կենտրոնական հիվանդանոցում:

1979-1984թթ. աշխատել է Յոկոտեմբերյանի շրջանի Երվանդաշատ գյուղի տեղամասային հիվանդանոցում որպես գլխավոր բժիշկ:

1984-1985թթ. աշխատել է Երևանի թիվ 19 պոլիկլինիկայում որպես գլխավոր բժշկի բուժական գծով տեղակալ:

1985-1986թթ. աշխատել է Երքաղգործկոմի առողջապահության բաժնում որպես բժիշկ-տեսուչ:

1986-1992թթ. աշխատել է ՀԽՍՀ Նախարարների խորհրդի առողջապահության և սոցիալական ապահովության բաժնում նախ որպես ավագ ռեֆերենտ, ապա՝ գլխավոր մասնագետ, այնուհետև բաժնի վարիչի պաշտոնակատար:

1992-1997թթ. եղել է ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ:

1997 թ.-ից Առողջապահության ազգային ինստիտուտի տնօրենն է, գիտական խորհրդի նախագահը, առողջապահության քաղաքականության և օրենսդրության ամբիոնի վարիչը:

1992-1994թթ. ակտիվ մասնակցել է ՀՀ սահմանների պաշտպանության համար մղվող մարտերին:

1982թ. ընդունվել է Մոսկվայի Յերցենի անվան օնկոլոգիական գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրա, իսկ 1987թ. նույն ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական թեզ՝ ստանալով բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Ավելի քան 50 գիտական հոդվածների և 1 մենագրության հեղինակ է:

2000թ. ընտրվել է ՌԴ բնական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, 2006թ. պարգևատրվել է Նշված ակադեմիայի՝ Չիժևսկու անվան ոսկե մեդալով:

2005 թվականից բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր է:

1994թ. պարգևատրվել է ՀՀ ՊՆ անվանական պարգևով, 1998թ.՝ ՀՀ վարչապետի շնորհակալագրով՝ «<1988 երկրաշարժի օրերին ցուցաբերած աշխատանքների համար>>, 2002թ.՝ ՀՀ առողջապահության նախարարության պատվոգրով, 2003թ.՝ ՀՀ վարչապետի շնորհակալագրով, 2004թ.՝ ՀՀ ՊՆ «<Անդրանիկ Օզանյան>> մեդալով, 2005թ.՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի պատվոգրով, 2006թ. ՀՀ նախագահի հրամանագրով «<Հայրենիքի մատուցած ծառայությունների համար>> ստացել է 2-րդ աստիճանի մեդալ:

1998 թվականից Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ է:

2001-2006թթ. եղել է ՀՀԿ կենտրոնի տարածքային կազմակերպության խորհրդի նախագահ:

2005թ. դեկտեմբերի 17-ին (ՀՀԿ 9-րդ համագումար), 2006թ. հունիսի 22-ին (ՀՀԿ 10-րդ համագումար) ընտրվել է ՀՀԿ խորհրդի անդամ:

2007թ. նոյեմբերի 10-ին (ՀՀԿ 11-րդ համագումար) և 2009թ. նոյեմբերի 28-ին (ՀՀԿ 12-րդ համագումար) ընտրվել է ՀՀԿ խորհրդի անդամ, ՀՀԿ գործադիր մարմնի անդամ:

2009թ. հունիսին ընտրվել է Երևան քաղաքի ավագանու անդամ, ՀՀԿ խմբակցության ղեկավար:

2009թ. հունիսին ընտրվել է հանրային խորհրդի առողջապահության, սոցիալական հարցերի հանձնաժողովի նախագահ, հանրային խորհրդի անդամ է:

2009թ. պարգևատրվել է «<Ծովակալ Իսակով>> մեդալով:

Ամուսնացած է, ունի երեք երեխա:

